

խառութիւն է: Սակայն, առայժմ կ'ուզեմ յիշել, որ մեծանուն Սաւաֆեան Շահ Թահմազըրը դրեթէ վաճառական մըն էր, շահակից եւ դործակից հայ վաճառականներուն: Նոր Ջուղայի թանդարանին մէջ դեռ կը պահուի այս Շահին մէկ հրովարտակը Հիճրէթի 972 կամ Քրիստոսի 1564 թուին տրուած, որով կ'արդիւէր «Թաւա» կոչուած: Հարկը հաւաքել Նախիջևանի շրջանին մէջ:

Դարձեալ նոյն թանդարանի թիւ 172 իրը հրովարտակ մըն է Շահ-Աէֆիէ, 1043 Հիճրէթի կամ մեր 1633 թուին տրուած, որով Շահը կը հրամայէ մաքսատանց եւ ճանապարհներու պահապաններուն, որ հայ վաճառականներէ բացառիկ մաքսեր չգանձեն կամ որոշուած ընդհանուր մաքսերէն աւելի պահանջ չընեն, եւ ոչ ալ մետաքսեղէնի եւ ուրիշ լաթի ու կերպասի մէջ խտրութիւն դնեն, այդպիսով հայ վաճառականներու երթի ու դարձը առանց դժուարութեան կատարուի:

Նախոր Շահն ալ, Հիճրէթի 1155 թուին եւ մեր 1742-ին (թանդարանի թիւ 177) Հայ վաճառականներու բողոքին վրայ, դարձեալ ճամբու պահապաններուն եւ մաքսապետներուն կը հրամայէ որոշեալ սակէն աւելի մաքս եւ ուրիշ ապօրինի պահանջներ չընել, քանի որ այդ պատճառով արտասահմանի հայ վաճառականները կը վախճան Պարսկաստանի վաճառականներուն հետ առեւտուր ընել, եւ տեղացի հայ վաճառականները այս պատճառով առանց վարկի կը մնան, կ'ենթարկուին մեծ վնասներու, եւ նոյն ատեն պետական դանձն ալ խոչոր եկամուտներէ կը զրկուի:

Ասոնք պարզապէս առաջ կը բերեմ՝ հաստատելու համար իրականութիւնը, թէ Հայ առեւտրականները կարելոր եւ կենսական բաժին մը ունէին Պարսկաստանի տնտեսական կեանքին մէջ:(1)

1) Պարսկահայ վաճառականները այնքան ճարպիկ ու կարող էին, որ կընային Պարսկաստան ներածուած Անգլիական ապրանքը մեծաքանակ թէ փոքրաքանակ հրապարակին վրայ ծախել Լոնտոնի մէջ ծախուած դնէն շատ ու շատ պակաս: John Fryer իր ուղեգրու-

Պարսկահայ առեւտուրին մէկ էջն էր, որ ներկայացուցի «Հայրենիք» Ամսագրի բազմաթիւ թիւերուն մէջ «Հայեանգլիական դրամագլխի Պայքարը Կովկասի մէջ 1550-1600 թուականներուն»:

Պարսկահայ առեւտուրին մէջ հին թէ նոր Ջուղաները շատ կարելոր եւ խոչոր դեր խաղացած են: Ջուղայեցի վաճառականապետ Խօջայ Նազարի եւ իր տան պատմութիւնը սպասիչ մենագրութեամբ մը ներկայացուցի «Հայրենիք» Ամսագրի 1943 տարուայ թիւերուն մէջ: Դարձեալ առիթ պիտի ունենամ

թեան մէջ (1672-1681) կը վկայէ, որ Սպահանի մէջ «ես զնեցի վերարկու մը բրդեայ կերպասէ (broad-cloth) մուշտակով աստառելու համար ձմեռուան համար, 14 շիլինկի գոպիթը (cobit, covado, cubit), դրեթէ հաւասար մեր Էսրառայիմ, որուն համար վստահ եմ որ վճարած եմ 20 շիլինկ եարտային մեր մօտ (այսինքն՝ Անգլիա): (Travels in East India and Persia, Vo. II, էջ 250): Ահա վկայութիւնը նոյնիսկ Անգլիացիի մը, որ շատ մեծ դովեստով կը խօսի Պարսկահայոց վաճառականական կարողութեանց մասին, եւ թանկագին ու մանրամասն սեղեկութիւններ կուտայ անոնց մասին:

Արդարեւ, կրնան ըլլալ առարկողներ, որ մեր ժամանակներուն ալ երբեմն Ամերիկեան ապրանքները աւելի աժան կը հրապարակուին Ամերիկայէն դուրս քան հոս մեր հրապարակներուն վրայ: Օրինակ, մեր երկրէն արտածուած շաքարը Կ. Պոլսոյ հրապարակին վրայ աւելի աժան գնով կը ծախուէր քան մեր մօտ: Ասիկա կը կատարուէր նոր հրապարակ դըտնելու կամ մրցումի պատճառով, որ սակայն հին ատեններու հետ չէ կարելի բարդատել: Հին վաճառականութիւնը ի վիճակի չէր այդ միջոցներուն դիմել, որով՝ Անգլիական ապրանքին Պարսկաստանի մէջ աւելի նուազ դիմով ծախուելուն պատճառը Հայ վաճառականներուն Անգլիական ապրանքին Պարսկական արտագրութեանց հետ նպաստաւոր կերպով փոխանակելէն էր: